կան ձեռնարկություններում աշխատող պաշտոնյաներով՝ ծանր պալարի նման նստած էր պետական ֆինանսների վրա, կլանելով պետության եկամուտների ամենամեծ տոկոսը։ Զինվորների այդ բանակը ստանում էր լավագույն ռոճիկներ ու թիուլներ և աշխատում միայն հարստացնելու շահի անձնական գանձարանը։ Խասսի արհեստանոցներում և գործատներում (քարխանե և բյութաթ)[33] *աշխատում էին հազարավոր մասնագետ արհեստավորներ, որոնք նույնպես թիուլներ և համեսալեներ էին ստանում դիվանի հարկերից*[34]*։*

Մինչև XVII դարը ընդունված էր թիուլներ տալ նաև խասսի հողերից, սակայն XVII դարի սկզբին շահ Աբբաս Ա-ն անցկացրեց նոր օրենք, ըստ որի թիուլներ տրվում էին միայն դիվանի հողերից և մուլքային հողերից ստացվող պետական հարկերից[35]*։ Այսպիսով խասսի հողերից և այլ ձեռնարկություններից ստացվող ամբողջ եկամուտները գանձվում էին հօգուտ արքունիքի։ Արքայական ընտանիքին պատկանող հողերը գլխավորաբար գտնվում էին մայրաքաղաքի շրջակայքում և կամ երկրի կենտրոնական նահանգներում*[36]*. սակայն ավելի վաղ ժամանակներից և հատկապես իլխանական շրջանում Հայաստանի որոշ վայրերում, մասնավորապես Արևելյան Հայաստանի առավել բարեբեր հողերում նույնպես կային թագավորական խասսին պատկանող հարուստ և եկամտաբեր գյուղեր ու ավաններ։*

Արևելյան Հայաստանում գտնվող արքունի կալվածների վերաբերյալ աղբյուրներում հատ ու կենտ տեղեկություններ կան միայն։ Բացի Զաքարիա Ագուլեցու վկայությունից Ագուլիս, Մեղրի, Շոռութ, Լեհրամ և Աստապատ գյուղերի մասին[37]*, այլ աղբյուրներում կամ արխիվային վավերագրերում ոչ մի ուրիշ անուն մեզ չի հանդիպել։ Խասս գյուղերի սահմանափակ քանակը Սեֆյան Իրանի այս նահանգներում պետք է բացատրել ոչ թե այն բանով, որ այդ վիլայեթների հողերը պակաս եկամտաբեր էին, այլ նրանով, որ լինելով սահմանագլխային նահանգներ՝ նրանք ենթակա էին հաճախակի հարձակումների և այդ տեսակետից էլ արքունիքի համար նպատակահարմար չէր այնտեղ կալվածներ ունենալ։ Մանավանդ որ խասս գյուղերը համեմատաբար ավելի արտոնություններ էին վայելում, ավելի հարուստ էին, այնտեղ կենտրոնացած էին նաև զգալի թվով արհեստավորներ և վաճառականներ, ուստի ավելի շատ կարող էին հարձակման և կողոպուտների ենթարկվել։ Թուման-և Նախչևանի Ազատ-Ջիրանի մահալում (Գողթն) գտնվող վերոհիշյալ հինգ գյուղերն էլ, ինչպես տեսնում ենք, բավական հեռու էին գտնվում պետական սահմանից և ավելի ապահով էին նման անակնկալներից։*

Կարելի է չկասկածել, որ բացի վերոհիշյալ գյուղերից նույն շրջանի ուրիշ շատ գյուղեր, որոնք նույնքան հարուստ և արգավանդ վայրեր էին, նմանապես թագավորական խասսին են պատկանել։ 1606 թ. Շահ Աբբաս Ա-ն շքախմբով շրջում է այս կողմերում, լինում Օրդուբադում, Վանանդում, Ագու-

---

33 *Տե՛ս* Scherefnameh, t. II, *էջ 252*, ذیل تاریخ عالم‌آرای عباسی، تهران، ۱۹۳۸, *էջ 177, 281*: Tadhkirat al-Muluk, *էջ 14, 23—24, 175—176։*

34 *Տե՛ս* **Առաքել Դավրիժեցի**, *Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 412։*

35 *Տե՛ս* **И. П. Петрушевский**, Очерки..., *էջ* 211.

36 *Իսքանդար Մունշու վկայությամբ դեռևս* XVI *դարում Իսֆահանի վիլայեթի մուլքերի մեծ մասը Շահ-Թահմազի խասսերի մեջ էին մտնում և նրա անձնական մուլքերն էին համարվում»* (Tadhkirat al-Muluk, p. 147)։

37 **Զաքարիա Ագուլեցի**, *Օրագրություն, Երևան, 1939, էջ 134։*